ԼՂԻՄ.

ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԺԱՄ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում շարունակում է պահպանվել ծայրահեղ լարված իրադրությունը: Զինվորական ստորաբաժանումները, մարզի ներքին գործերի մարմինների աշխատողները բոլոր միջոցները ձեռնարկում են, որպեսզի իրավիճակը դուրս չգա վերահսկողությունից: Եղած տեղեկությունների համաձայն, Շուշիի հայ եկեղեցու մոտ ադրբեջանցիները հրկիզել են մեկ տուն: Ասկերանի շրջանում Դաշբուլաղ, Լեսնայա, Խրամորթ գյուղերում հրաձգություններ են տեղի ունեցել: Ճանապարհներին պարեկում է ռազմական տեխնիկան, թույլ չտալով պպտնեշներ ստեղծել: Բայց Աղդամում այդպիսիք կան, և այնտեղ հավաքվում են 200—300-ական մարդ և ավելին: Աղդամի միլիցիան դրան չի խոչընդոտում: Այդտեղ է գտնվում նաև Ադրբեջանական ԽՍՀ արդարադատության մինիստր Օրուջևը: Մարտակերտի շրջանում, Կիչան և Սրխավենդ գյուղերի միջև սպանվել է մեկ հայ տղամարդ: Իրեն զգալ է տալիս ՏԱՍՍ-ի նախորդ հաղորդումը, թե սպանվել է երկու ադրբեջանցի, թեպետև դեռևս պարզված չէ, թե ում կողմից և ինչ հանգամանքներում են նրանց սպանել: Կենտրոնական «Մայակ» ռադիոծրագրի հատուկ թղթակից Օմելչենկոն, որը գտնվում է մարզում, եթեր է արձակել մի հաղորդում, որով արտահայտել է իր անհամաձայնությունը ՏԱՍՍ-ի վերջին հաղորդման վերաբերյալ: Երեկ երեկոյան Շուշիում, որտեղ տեղադրված է հեռուստատեսային վերահեռարձակիչը, անջատվել էին Երևանից Ստեփանակերտ տրվող հաղորդումները:

Հուլիսի 12-ին Ստեփանակերտ ժամանեց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Իվանովիչ Վոլսկին:

Այսօր՝ հուլիսի 13-ին, «Խորհրդային Ղարաբաղ» թերթը լույս չտեսավ, քանի որ տեղի տպարանը գործադուլ է անում:

— Եվս մի լուրջ փորձություն վիճակվեց արցախցիներին,— Արմենպրեսի թղթակցին ասաց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի գաղափարախոսական բաժնի վարիչ Ստեփան Դադայանը:— Մենք ստիպված ենք բացատրական մեծ աշխատանք տանել բնակչության շրջանում, որպեսզի նա չենթարկվի ամեն կարգի պրովոկացիաների, ուրոնք առայժմ չի հաջողվում կասեցնել: Զգալ է տալիս մարդկանց նյարդային լարվածությունը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կայացվելիք որոշման ձգձգման հետևանքով: Իրադրության բարդացման խնդրում իրենց միանգամայն անցանկալի լուման ներդրեցին նաև ՏԱՍՍ-ի խիստ անզգույշ հաղորդումները: Լեռնային Ղարաբաղի աշխատավորները գիտակցում էին և գիտակցում են, որ ԼՂԻՄ-ի խնդիրը հնարավոր է կարգավորել միայն դեմոկրատական հիմունքներով: Սակայն, ինչպես երևում է, նրանք, ովքեր այդ խնդիրը անիրական են համարում և խուսափում են պառլամենտական բանակցություններից, ընտրել են այլ ուղի, այն է՝ խանգարել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից հաստատված Ազգությունների խորհրդի հանձնաժողովի արդյունավետ աշխատանքը հանգիստ մթնոլորտում: Նրա եզրակացությունից է մեծապես կախված ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու՝ մարզի բնակչության գերակշիռ մեծամասնության բարձրացրած արդարացի հարցի զարգացման դինամիկան:

Ես վստահ եմ, որ արցախցիները այդ փորձությունից էլ պատվով դուրս կգան, քանի որ նրանք միշտ լավատես են եղել: Արդարությունը պետք է հաղթանակի:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ